ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 206

17 մայիս 2021թ.

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար Ծաղկաձոր համայնքում տեղամասային կենտրոն սահմանել Ծաղկաձորի միջնակարգ դպրոցի շենքը՝ քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց 15:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 207

17 մայիս 2021թ.

ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների քարոզչություններ կատարողներին անվճար հիմունքներով տրամադրել քաղաք Ծաղկաձոր,Մայիսյան փողոց, թիվ 15 հասցեում գտնվող Ծաղկաձորի միջնակարգ դպրոցի դահլիճը՝ նստատեղերի քանակը՝ 120:

2. Դահլիճը տրամադրել սույն թվականի հունիսի 07-ից մինչև սույն թվականի հունիսի 18-ը, ժամը 24:00-ն՝ ժամը 18:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 208

17 մայիս 2021թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քարոզչական պաստառներ փակցնելու համար Ծաղկաձոր համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր՝ քաղաք Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 6 և Գրիգոր Մագիստրոսի փողոց, թիվ 13 հասցեներում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 209

18 մայիս 2021թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՈՒՆԴ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Սուրեն Մովսիսյանին /գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյան փողոց, թիվ 2/2/ տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 385 քմ տարածքում,

2) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 385 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 210

20 մայիս 2021թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 74-Ն որոշումը և համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 04 որոշումը, ինչպես նաև Ծաղկաձոր համայնքի բնակիչ Կորյուն Ռուբիկի Հարությունյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Քաղաք Ծաղկաձոր, Խաչատուր Կեչառեցու փողոց, շենք 56 բնակարան թիվ 3 հասցեի բնակիչ Կորյուն Ռուբիկի Հարությունյանին տրամադրել դրամական օգնություն 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ որդու՝ Ռուբեն Կորյունի Հարությունյանի առողջական խնդիրները լուծելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 211

20 մայիս 2021թ.

ՍԱՄՎԵԼ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Սամվել Մամիկոնյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սամվել Ռուբենի Մամիկոնյանին օտարել Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների նրբանցք թիվ 23/1 հասցեում գտնվող,(վկայական համար 23032021-07-0091, կադաստրային ծածկագիր 07-005-0003-0031) Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված 0,00395 հա մակերեսով հողամասը՝ 178 698 (հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամով և իր կողմից կառուցված 68,36 ք.մ արտաքին (57,2 ներքին) մակերեսով բնակելի տունը՝ 533 208 (հինգ հարյուր եռեսուներեք հազար երկու հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամով:

2. Սամվել Ռուբենի Մամիկոնյանի հետ կնքել շինության և հողամասի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 212

24 մայիս 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Վայն Սթոր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ քաղաք Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ փողոց, թիվ 16 / տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 40 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 213

24 մայիս 2021թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ , ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ ձեռնարկատեր Նարինե Ղազարյանին /գործունեության հասցեն՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրներ փողոց, թիվ 18 / տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 202,9 քմ տարածքում,

2) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 202,9 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 214

24 մայիս 2021թ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Ինֆինիտի 777>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց 2.4/1 տրամադրել՝

1) 2021 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 194 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 215

24 մայիս 2021թ.

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դավիթ Երվանդի Խոջամիրյանի կողմից իր սեփականություն հանդիսացող հողամասի վրա՝ քաղաք Ծաղկաձոր,Վ.Հարությունյան փողոց, թիվ 11/8 և 11/52 հասցեներում առանց համապատասխան թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ /պարսպի ինքնակամ կառուցում/:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով Ծաղկաձորի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ:

Ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի / սեփականության իրավունք ունեցող անձի կողմից հողամասի վրա շինության ինքնակամ կառուցում/ հատկանիշներով, 219 [1] հոդվածով և հիմք ընդունելով վարչական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 24-ի թիվ 8 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դավիթ Երվանդի Խոջամիրյանի /հասցե՝ Երևան, Կենտրոն, Իսահակյան փողոց, շենք 24, բնակարան 11/ կատմամբ նշանակել տուգանք՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2.Տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում Ծաղկաձոր համայնքի բյուջե՝ 900125002114 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պարտապանին իրազեկելուն հաջորդող օրը:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

5. Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու և որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 216

26 մայիս 2021թ.

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Օնիկ Սարգսի Վաթյանին անշարժ գույքի (հողամասի) առուվաճառքի պայմանագրով պատկանող՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող 0,22 հա մակերեսով հողամասի և մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյանի փողոց թիվ 5/1 հասցեում գտնվող 0.04 հա մակերեսով հողամասի միավորման հետևանքով առաջացած 0.26 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Վլադիմիր Հարությունյանի փողոց թիվ 5:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ